ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՍՎՈՓ ԾՐԱԳԻՐ D-ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ

1. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1. Սույն Ավտոմատացված սվոփ ծրագիր D-հաշիվներում պայմանները (այսուհետ՝ Սվոփ ծրագիր) հանդիսանում է «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ներդրումային ընկերություն) Գործարար հիմական պայմանների (այսուհետ նաև՝ Հիմական պայմաններ) անբաժանելի մասը, որը հասանելի է Ներդրումային ընկերության հետևյալ պաշտոնական կայքէջի հասցեով https://ffin.am/documents/:

1.2. Հիմական պայմաններով և Սվոփ ծրագրով կարգավորվում են Ներդրումային Ընկերության ու Հաճախորդի միջև Սվոփ գործարքներից ծագող հարաբերությունները, իսկ Սվոփ պայմաններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հիմական պայմաններով: Սվոփ պայմաններում օգտագործված հասկացություններն ունեն նույն նշանակությունը, ինչ դրանց տրված է Հիմական պայմաններով, եթե այլ բան սահմանված չէ Սվոփ ծրագրով:

2. ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԾՐԱԳՐԻՑ

2.1. Հաճախորդը պետք է իր բրոքերային հաշվից փոխանցի ՀՀ դրամ D-հաշվին: Փոխանցելով այդ հաշվին ՀՀ դրամ՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը սույն հավելվածին:

2.2. Հաճախորդը կարող է համալրել իր D-հաշիվը իր բրոքերային հաշվից փոխանցում կատարելով:

3. ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սվոփ գործարքը համարվում է կնքված Հաճախորդի կողմից D-հավին ՀՀ դրամ փոխանցելու պահից:

3.2. Ամեն Սվոփ գործարքը կնքվում է մեկ աշխատանքային օրով:

3.3. Գործարքը համարվում է կայացած՝ միջոցների մինչև հաջորդ աշխատանքային օրը հաշվի վրա մնալու դեպքում: Գործարքի կայացման արդյունքում Հաճախորդի եկամուտը հաշվեգրվում են D-հաշվի մնացորդի վրա սույն հավելվածի բանաձևի համաձայն:

4. ՍՎՈՓ ԳՈՐԾԱՐՔՈՎ ԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Ներդրումային ընկերության և Հաճախորդի միջև Սվոփ գործարքը կատարվում է հետևյալ երկու փուլերով՝

- գործարքի կնքման օր՝ Ընկերությունը հաճախորդին վաճառում ԱՄՆ դոլլար և գնում է ՀՀ դրամ տվյալ օրվանը նախորդող աշխատանքային օրվա ՀՀ ԿԲ փոխարժեքով(այուհետ փոխարժեք) (AMD առք/ USD վաճառք)

- Մարման օր՝ Ընկերությունը հետ է վաճառում ՀՀ դրամ Հաճախորդին և Գնում նույն ծավալով ԱՄՆ դոլլար 5-րդ կետում նշված փոխարժեքով (USD առք/ AMD վաճառք)։

5. ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

5.1. Գործարքի մարման օրվա փոխարժեքի հաշվարկ

$$ՄՓ = Փ + round(Փ × (1 + r) ^(1/n), 2)$$

որտեղ՝

- **ՄՓ**—մարման օրվա փոխարժեք,

- **Փ** — գործարքի կնքման օրվա փոխարժեք,

- **r** — գործարքից եկամտաբերություն (ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքից նվազեցված 0.75%),

- **n** — տարվա ընթացքում ժամանակահատվածն (365՝ օրական հաշվարկման դեպքում),

- **round (..., 2)** — կլորացում մինչև երկու տասնորդական։

5.2. Գործարքից եկամտաբերության (**r**) հաշվարկը կարող է փոփոխվել Ընկերության միանձնյա որոշմամբ։ Օրական հաշվարկված եկամտի նվազագույն չափը չի կարող պակաս լինել 1 (մեկ) լումայից, եթե եկամուտն ավելի փոքր է, այն չի հաշվարկվի ։

5.3. Ներդրումային ընկերությունը եկամուտները վճարելիս ֆիզիկական անձանց համար հանդիսանում է հարկային գործակալ և վճարում է 20% եկամտային հարկ, Իրավաբանական անձանց դեպքում՝ Ներդրումային ընկերությունը հարկային գործակալ չի հանդիսանում։